ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-5-10

Թիվ 18/160
„07„ դեկտեմբերի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 03-ին կայացած թիվ 9 նիստի որոշումները:
Առդիր «12» թերթից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-51

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» դեկտեմբերի 2018 թվականի N 32 -Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 14 - րդ հոդվածի 6-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու թիվ 9 նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Չեզոքների
Թ.Պողոսյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ի.Ազիզյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ռ. Ազիզյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ե.Ասմարյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա.Սարգսյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ս.Ստեփանյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Գ.Նազարյան (ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի դեկտեմբերի 03
գ.Արմավիր

Հաստատված
Հայաստանի Հանրապետության
Armավիրի մարզի Armավիր գյուղական
համայնքի ավագանու 2018 դեկտեմբերի 03-ի
N 32-Ա որոշման

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» դեկտեմբերի 2018 թվականի N 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասինՀայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի վարչական տարածքում 2019թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա վ ա գ ա ն ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ի.Ազիզյան- ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ռ.Ազիզյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ա.Ասմարյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Գ.Նազարյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ա.Սարգսյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ս.Ստեփանյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------

Համայնքի ղեկավար՝ **Ռ.Ֆ.Մարգարյան**

2018թվականի դեկտեմբերի 03
գ.Արմավիր

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018թվականի դեկտեմբերի 3-ի
թիվ 9 նիստի թիվ 33.Ն որոշմամբ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան՝նորշենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝երեք հազար դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երեք հազար դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հազար դրամ.

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝յոթ հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հարյուր դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերեկանգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.
գ.. 51-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ.
դ.101-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ.
ե.201-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.
զ. 501-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան երկու հազար հինգ հարյուր դրամ.

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ.
գ.. 51-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ.
դ.101-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ.
ե.201-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.
զ. 501-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

5. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

՝ ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
գ.. 51-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.
դ.101-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.
ե.201-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ.
զ. 501-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնը հինգ հազար դրամ.

Ոչ հիմնական շինությունների ներսում՝

՝ ա.մինչև 26քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հարյուր դրամ.
բ.. 26-ից մինչև 50քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հարյուր դրամ.
գ.. 51-ից մինչև 100քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար դրամ.
դ.101-ից մինչև 200քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ.
ե.201-ից մինչև 500 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ.

գ. 501-ից և ավելի քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
բ/ հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում՝առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24ᵒᵒ -ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.
գ/ բաղնիքների(սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հազար դրամ.
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ զրո դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:
10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնք 1 փողոց 19 շենք 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» դեկտեմբերի 2018թվականի N 34-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի առաջին մասի 19 կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56 -րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի կողմից 2019 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

Կողմ	Դեմ	Չեռնպահ
Թ.Պողոսյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ի.Ազիզյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ռ. Ազիզյան---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ե.Ասմարյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Գ.Նազարյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ա.Սարգսյան ----------(ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	
Ս.Ստեփանյան ---------- (ստորագրություն)	----------(ստորագրություն)----------	

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2018թվականի դեկտեմբերի 03
գ.Արմավիր

Հաստատված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արմավիր գյուղական համայնքի
ավագանու 2018թ. դեկտեմբերի 03-ի
N 34-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՄԱՄ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող,ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1/ համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝հինգ հազար դրամ.

2/համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝մեկ հազար դրամ.

3/ համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝մեկ հազար դրամ.

4/ համայնքի բնակիչ համարվող անձանց՝նպաստներ և կրթաթոշակներ,քաղաքացիների բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում՝դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիրհաստատելու համար՝մեկ հազար դրամ.

2.Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց՝մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1/.Համայնքային ենթակայության արվեստի դպրոց և մանկապարտեզ հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել ամսական երեք հազար դրամ.

2/համայնքի բնակչության առանձին խմբերի համար վճարներ սահմանել հետևյալ չափով՝

ա/մեկ ընտանիքից երկու և ավել երեխաների համար՝25 տոկոսի չափով՝երկու հազար երկու հարյուր հիսուն դրամ.

բ/միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝50 տոկոսի չափով՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

գ/երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 75 տոկոսի չափով՝յոթ հարյուր հիսուն դրամ.

դ/զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների,ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝100 տոկոսի չափով:

3/ Արմավիրի արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում այլ համայնքներից հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել՝ վեց հազար դրամ:

3. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար վճար սահմանել՝ հինգ հազար ՀՀդրամ:

4.Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝

1/ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հիսուն դրամ,

2/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար ՀՀդրամ,

3/հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներից ըստ շենքերի և շինությունների մակերեսի՝ մեկ քառակուսի մետրի համար՝ տասը դրամ:

5. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրափակիչ աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2018 թվականի N 35-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդհոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթախմբով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2017թվականի դեկտեմբերի 15-ի N 42-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

ծախսային մասում՝

631-ից

5113 հոդվածը կրճատել՝ 120,0հազ.դրամով.
5134 հոդվածը ավելացնել 120,0հազ.դրամով.

111-ից

4657 հոդվածը	ավելացնել	3741,6 հազ դրամով
4212 հոդվածը	կրճատել	369,0 հազ դրամով
4241 հոդվածը	ավելացնել	69,0 հազ դրամով
4111 հոդվածը	կրճատել	1090,0 հազ դրանով
4214 հոդվածը	կրճատել	35,0 հազ դրանով
4234 հոդվածը	կրճատել	54,0 հազ դրանով
4269 հոդվածը	կրճատել	15,6 հազ դրանով

511-ից

4213 հոդվածը կրճատել 300,0 հազ դրամով.

611-ից

4241 հոդվածը կրճատել 27,0հազ.դրամով.

951-ից

4511 հոդվածը ավելացնել 100,0հազ. դրամով.

1071-ից

4729 հոդվածը կրճատել 2000,0հազ.դրամով.

922-ից

4637 հոդվածը կրճատել 20,0հազ.դրամով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ		
Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ի.Ազիզյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ռ.Ազիզյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ե. Ասմարյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ա.Սարգսյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ս.Ստեփանյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Գ.Նազարյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թ.հունվարի դեկտեմբերի 03
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» դեկտեմբերիի 2018 թվականի N 36-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Արմավիր համայնքի երեք սոց անապահով ընտանիքին 210,0/երկու հարյուր տասը հազար/ << դրամի օգնություն, յուրաքանչյուր ընտանիքին 70,0/յոթանասուն հազար / << դրամ՝ մահվան, թաղման ծախսերը հոգալու համար՝համաձայն հավելվածի.
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ան ու ա ն դ ա մ ն ե ր

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ի.Ազիզյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ռ.Ազիզյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ե.Ասմարյան----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Ս.Ստեփանյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն) ----------
Ա. Սարգսյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------
Գ.Նազարյան ----------	(ստորագրություն) ----------	(ստորագրություն)----------

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2018թվականի դեկտեմբերի 03
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր գյուղական
համայնքի ավագանու 2018 դեկտեմբերի 03-ի
N 36-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

1. Ստեփանյան Սուրիկ 70,0հազ. դր.
2. Սադոյան Գայանե 70,0 հազ.դր.
3. Տեր-Հարությունյան Իշխան 70,0 հազ.դր.